«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԿՐՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ ՝ Մանկավարժություն

ՀԵՂԻՆԱԿ Հերմինե Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՝ Լճաշենի «Աշոտ Տեր-Գրիգորյան ի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..….. 2

ՄԱՍ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ……..……..…….....3

ՄԱՍ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ……...15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……...19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….…….……..21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: ՀՀ կրթության մասին օրենքը և կրթական քաղաքականության ժամանակակից ռազմավարությունը պահանջում են աճող սերնդի ստեղծագործական ներուժի դրսևորման հնարավորությունների ընդլայնում, ստեղծագործական կարողությունների ցարգացում:

ՀՀ կրթության մասին օրենքում ամրագրված է, որ հասարակության սոցիալական պատվերը կողմնորոշված է կրթական գործընթացում ստեղծագործող անձի զարգացմանը,որը կունենա ոչ միայն խորը և կայուն գիտելիքներ, այլև ունակ կլինի կիրառել դրանք նոր ժամանակի խնդիրների լուծման համար: Անձի ստեղծագործական ոլորտի հետազոտողները առաջին պլան են մղում կրտսեր դպրոցական տարիքը՝ որպես ստեղծագործական կարողությունների զարգացման բուռն շրջան: Այս տարիքում երեխաներն ավելի հետաքրքրասեր են, բաց են ամեն տեսակ նորի համար, դրական վերաբերմունք ունեն մեծերի և շրջապատող միջավայրի նկատմամբ, որոնք էլ նրանց համար որպես մոդել են ծառայում: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը առավելապես իրականցվում է հանրակրթական դպրոցում տարբեր առարկայախմբերի ուսուցման գործընթացում:

Հետազոտության նպատակն է՝ առաջադրել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդներ,միջոցներ ու տեխնոլոգիաներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները.

- Թեմայի վերաբերյալ գիտական գրականության և հայեցակարգային մոտեցումների վերլուծության հիման վրա բացահայտել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման տեսական հիմքերը,
- Բացահայտել տարրական դպրոցում դասավանդվող ուսումնական առարկաների հնարավորությունները ուսուցման գործընթացում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում:
- Առաջարկել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման միջոցներ,մեթոդներ և տեխնոլոգիաներ և մեր կողմից մշակված դասերի օրինակներով հիմնավորել դրանց արդյունավետությունը:

ՄԱՍ 1

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մարդու, նրա ընդունակությունների ուսումնասիրությունը,սկսած վաղ միջնադարից մինչև մեր օրերը,դարձել է մանրակրկիտ քննարկման և վերլուծման,գաղափարական սուր բախումների ու պայքարի առարկա ոչ միայն հոգեբանների,փիլիսոփաների,այլև մանկավարժների,սոցիոլոգների համար:

Ինչպես նշում է Է.Պ.Իլինը, որպեսզի հասկանանք թե ինչ է կարողությունը, հարկավոր է դիտարկել երկու գործոն՝ անձնային և ժառանգական: Անձնային գործոնի ժամանակ կարողությունները ընկալվում են որպես ընդունակություններ, որոնք ազդում են անձի գործունեության վրա,սակայն ժառանգական գործոնի ժամանակ հաշվի ենք առնում կենսաբանական կողմը՝ գենեզը և նրա կառուցվածքը:[1]

Մի շարք գիտնականների շրջանում առաջանում են հակասություններ անձնային գործոնի շուրջ, կապված այն բանի հետ, թե ինչ ընդունակություններ կամ առանձնահատկություններ կարելի է հասկանալ «կարողություն» հասկացության տակ,քանի որ ժառանգական գործոնի պարագայում մենք դիտարկում են մի շարք հոգեֆիզիոլոգիական հատկություններ կամ ընդունակություններ: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ չկան առանց կարողությունների մարդիկ,այլ կան բավարար չափով այդ կարողությունները չզարգացած մարդիկ:

Ստեղծագործական կարողությունների և ունակությունների հիմնախնդիրների ուսումնասիրման մեջ մեծ ներդրում են ունեցել մի շարք մեծանուն մանկավարժներ և հոգեբաններ (Ս.Լ Ռուբինշտեյն, Բ.Մ. Տեպլով, Բ.Գ. Անանև, Ն.Ս. Լեյտես, Վ.Ա. Կրուտեցկի, Ա.Գ. Կովալեև, Կ.Կ .Պլատոնով, Ա.Մ. Մատյուշկին, Վ.Դ. Շադրիկով, ՅՈՒ.Դ. Բաբանա, Ի.Ի. Իլյասով, Վ.Ի. Պանով, Ի.Վ. Կալիշ, Ն.Բ.Շումակովա, Վ.Ս.Յուրկեվիչ):

«Կարողություն» հասկացությունը իր բնորոշմամբ մոտ է «Ստեղծագործականություն» և «Ստեղծագործական մոտեցում» հասկացություններին և շատ հաճախ չի տարբերակվում, սակայն մի շարք հոգեբաններ և գիտնականներ հակասում են, ասելով, որ «Ստեղծագործականություն» հասկացությունը ենթադրում է նյութական կամ հոգևոր նոր

[1] Ильин, Е.П. Психологиятворчества, креативности, одаренности: «Питер», 2012, с 45.

արժեքի ստեղծում։ ՈՒսումնասիրության արդյունքում հասկացությունը մնում է ոչ ամբողջովին բացահայտված, ինչը պայմանավորված է ստեղծագործական մեխանիզմների գաղտնիությամբ և «Ստեղծագործականություն» հասկացության բարդությամբ։Իր աշխատանքներում Վ.Ն.Դրուժնինը նշում է, որ հոգեբանության մեջ առանձնացնում ենք երեք հիմնական մոտեցում ստեղծագործական կարողությունների և դրանց զարգացման վերաբերյալ, և դրանք ձևակերպում է հետևյալ կերպ.

- որպես այդպիսին ստեղծագործական կարողություններ չկան,այլ կա ինտելեկտուալ կարողություն, որը ի հայտ է գալիս անհրաժեշտության դեպքում, բայց այն բավարար չէ անձի ստեղծագործական գործունեության համար։ Անձի ստեղծագործական գործունեության համար մեծ դեր են խաղում մոտիվացիան,անձնային արժեքները և որակները։(Ա.Մասլոու, Ա. Տաննենբաում, Ա.Օլոխ, Դ.Բ. Բոգայավելենսկայա և ուրիշներ)։
- Ստեղծագործական կարողությունը չի բխում ինտելեկտից, բայց բարձր մակարդակի ինտելեկտը ենթադրում է նաև զարգացվածության բարձր մակարդակ ունեցող ստեղծագործական կարողություններ(Դ. Գիլֆորդ, Կ. Թեյլոր, Գ. Գրուբեր)։
- Ստեղծագործական գործունեությունը մտավոր գործընթացի հատուկ ձև չէ և գրեթե բոլոր մասնագետները կիսում են այս տեսակետը(Դ.Վեկսլեր, Ռ.Իայսբերգ, Գ.Այզենկ, Լ.Տերմեն և ուրիշներ)։[2] Ստեղծագործական կարողությունների առավել բարենպաստ տարիք է համարվում կրտսեր դպրոցական տարիքը, քանի որ հատկապես այս տարիքում է առաջատար դառնում ուսումնական գործունեությունը, որը նպաստում է հոգեկան բոլոր գործընթացների, հատկապես մտածողության, ինքնուրույն աշխատանքի և երևակայության զարգացմանը։ Անդրադառնալով Վ.Վ. Դավիդովի տեսակետին՝ կարող ենք ասել, որ ուսումնական գործունեությունը նպաստում է կրտսեր դպրոցականների մի շարք կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը։Երեխայի մոտ ձևավորվում են մի շարք մտավոր գործընթացներ, որոնք նպաստում են նրա գրելու, կարդալու, նկարելու, վերլուծելու, տրամաբանելու և նմանատիպ կրթական այլ գործունեություններ յուրացմանը։ Ուսուցման բարենպաստ պայմաններն ստեղծում են նախադրյալներ Կրտսեր դպրոցականներիստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման համար։[3] Ուսումնական գործունեությունը կրտսեր դպրոցականից պահանջում է մի շարք

[2] Дружинин, В.Н. Психология.учебник для гуманитарных вузов:— 2-е изд. — спб.: питер, 2019, с 656.
[3] Давыдов В.В. Теория развивающего обучения. М., 2006, с 456.

- հոգեկան երևույթների՝ հիշողության, երևակայության, մտածողության մասնակցություն: Վ.Վ Դավիդովը իր աշխատանքներում նշում է, որ երեխայի երևակայությունը ունի
- առանձնահատուկ և հստակ պահանջներ: Նա առաջարկում է, որպեսզի ուսուցիչները դասագործընթացում կիրառեն մի շարք զննական պարագաներ՝ նկարներ, գծապատկերներ, առարկաներ, այդ պահանջների բավարարման և զարգացման համար:Այսպիսի գործունեությունը կնպաստիդասագործընթացում կրտսեր դպրոցականների ակտիվ գործունեության ապահովմանը, ինչպես նաև վերը նշված հոգեկան երևույթների էլ ավելի զարգացմանը:[4]

Հոգեբաններ Վ.Տ. Կուդրյավցեվը և Վ.Սինելնիկովը հիմնվելով մի շարք պատմական և մշակույթային փաստերի վրա, առանձնացնում են հետևյալ ստեղծագործական կարողությունները.

- մասնակիի փոխարեն, ամբողջը տեսնելու կարողություն,
- ծագած խնդրի այլընտրանքային լուծում գտնելու կարողություն,
- արագ և արդյունավետ կողմնորոշվելու կարողություն,
- տարաբնույթ օբյեկտների այլ տեսանկյունից բացահայտման կարողություն,
- այդ օբյեկտները վերլուծելու կարողություն.

Վ.Տ.Կուդրյավցեվըհամարում էր, որ երեխաների առջև դրված խնդիրները դառնում են նախադրյալներ նոր գաղափարների, կարողությունների զարգացմանհամար, ինչպես նաև ապահովում են կրթության արդյունավետությունը:

Հետաքրքրական է նաև Է.Վ.Մուսոլիտինի կատարած հետազոտական աշխատանքները կրտսեր դպրոցականների ստեղծագործական դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է այնպիսի միջավայր, որտեղ ուսումնասիրվող օբյեկտը կլինի երեխան և նրա առջև դրված կլինեն բազմաբնույթ, տարատեսակ պահանջներ: Այստեղ շեշտվում է այն հանգամանքը, որ երեխան ոչ ստանդարտ իրավիճակներում կարիք է զգում արագ հարմարվելու, դրանով իսկ դրդվելով խնդրի լուծման համար ստեծագործական կամ այլընտրանքային լուծում գտնելուն: Կարելի է միանշանակ համաձայնվել նրա առաջադրած պայմանների հետ, որոնք նպատում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների

[4] Давыдов В.В. Теория развивающего обучения. М., 2006, с 249.

զարգացման ուսումնասիրության ժամանակ հարկավոր է անդրադառնալ նաև ընդունակություններին և դրանց զարգացման առանձնահատկություններին:

Ներկա սոցիալական առաջընթացի աննախադեպ պայմաններում բացառիկ

նշանակություն են ստանում աշակերտների ակտիվության, նախաձեռնության, ինքնուրույն աշխատանքային կարողությունների զարգացման խնդիրները: Ապագա մանկավարժից պահանջվում է ոչ միայն յուրացնել ներկայիս, այլև ստեղծել նոր, առաջավոր,գերճշգրիտ տեխնիկա:Այդ բանին նրանց պետք է նախապատրաստել և՛ գործնական,և ՛հոգեբանական տեսանկյունից: Ռուս ականավոր մանկավարժ Կ.Դ ՈՒշինսկին, անդրադառնալով ինքնուրույն աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը,գրել է. «Աշխատանքը, ինչպես մենք այն հասկանում ենք,մարդու այնպիսի գործունեություն է,որին նա դիմում է ելնելով՝կյանքում իսկապես այս կամ այն նպատակին հասնելու անհարաժեշտությունից»:[5] Ըստ մանկավարժական գիտությունների թեկնածու Հ.Ռ.Ֆարզադյանի՝ ստեղծագործական գործունեության՝ որպես գիտական հիմնախնդրի ուսումնասիրումը կարևոր է անձի ամբողջականությունը, նրա ստեղծագործական ներուժի զարգացման մեխանիզմները և տարբեր ոլորտներում ինքնակողմնորոշման և ինքնարտահայտման ձգտումները հասկանալու համար:[6]

Անդրադառնալով ստեղծագործական կարողության ձևավորման գործընթացին՝հետազոտողների մի մասը նշում է,որ ստեղծագործական կարողությունը հատուկ է մարդուն բնությունից: Սակայն այս փաստը չի նշանակում,որ բոլորը օժտված են միատեսակ զարգացած ստեղծագործական կարողությամբ: Ստեղծագործական կարողությունը կարիք ունի բացահայտման,ձևավորման և զարգացման:

«Երեխայի ստեղծագործական զարկերակը ինչ աստիճանի կվերափոխվի, կախված է մեծ մասամբ ծնողներից և ուսուցիչներից, քան բնատուր ժառանգական կարողությունից: Հասուն մարդը ընդունակ է զարգացնել կամ ոչնչացնել երեխայի ստեղծագործական կարողությունը դեռ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում»-գրում է. Թորրենսը :[7]

Ն. Ռոդջերսը կարծում էր, որ տղծագործությունը մեր էության մասն է և ստեղծագործական կարողությունների բացակայությունը արդյունք է ստեղծագործական

[5] ՈՒշինսկի Կ.Դ, Մանկավարժական ընտիր երկեր Հ1,Երևան, 1998, էջ 344:
[6] Ֆարզադյան Հ.Ռ.,Սովորողների ստեղծագործական գործունեության կազմակերպումը դպրոցում, Երևան, 2012, էջ6:
[7] Torrance E. P. Guiding creative talent - Englewood Cliffs, WJ.: Prentice-Holl, 2012, p 6.

ունակությունների խլացմանը մանկական տարիքում գնահատականների և քննադատության միջնորդությամբ:

Չի կարելի սովորեցնել ստեղծագործական գործողության,բայց դա չի նշանակում,որ ուսուցիչը չի նպաստելու նրա բացահայտմանը և զարգացմանը:»-ասել է Լ.Ս.Վիգոտսկին :[8]

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում կարևոր դերակատարում ունի ուսուցիչը և արդյունավետությունը պայմանավորված է մասնագիտական կոմպետենցիաների առկայությամբ:ՈՒսուցչի խնդիրը պետք է լինի ուղղորդել աշակերտին և պայմաններ ստեղծել սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունները պետք է զարգացնել աստիճանաբար և պլանավորված ձևով:Ուսուցիչը տեսական նյութը պետք է հաղորդի հարցադրման ձևով,որպեսզի սովորողները հնարավորություն ունենան մտածելու,իրենց մտածողությունը գործնականում կիրառելու, հանդես բերեն ինքնուրույնություն և նախաձեռնողականություն:

Այսօր հատկապես արժևորվում են քննադատական և ստեղծագործական

մտածողության այն ձևերը,միջոցները,եղանակները,որոնք անհատին հնարավորություն են տալիս նոր գիտելիքներ ձեռք բերելու,ըմբռնելու անընդհատ փոփոխվող միջավայրը,կողմնորոշվելու հարափոփոխ աշարհում և ըստ արժանվույն տնօրինելու այն:

Բոլոր ժամանակներում մակավարժները և հոգեբանները կարևորել են սովորողների անհատական առանձնահատկություններով կողմնորոշվելու անհրաժեշտությունը:Երեխայի անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու սկզբունքը կարևորել են Լ.Ս. Վիգոտսկին,Պ.Յ. Գալպերինը և այլք:Սակայն մի տևական ժամանակաշրջան ավանդական ուսուցման պայամններում ավտորիտար ոճի գերիշխանությամբ,այս գաղափարները աշակերտի նկատմամբ հնարավոր չէր կիրառել:Այն գաղափարները,որոնք ուսումանդաստիարակչական գործընթացի կետրոնում դիտարկում են սովորողի անձը,անհատականությունը,ընդունակությունները,հնարավորությունները,կազմում են մարդասիրական մանկավարժության էությունը:

Մարդու ստեղծագործական կարողությունները զարգանում են նրա գործունեության տարբեր ձևերի ընթացքում՝նրան դարձնելով ստեղծագործ արարած,այսինքն՝բարձր

[8] Выготский, Л.С. Воображение и творчество в детском возрасте, 2007, с 96.

ստեղծագործականություն ունեցող անհատ:

Մարդու ստեղծագործական կարողությունների զարգացումը մեծապես

պայմանավորված էնաև նրա երևակայությամբ:Սեփական փորձի կուտակման և կիրառման,հոգեկանի զարգացման,անձի ձևավորման գործընթացում մարդու երևակայությունը կարևոր պայման է:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների ակունքը նրա գործունեությունն է: Ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացն ունի մեկ կարևոր առանձնահատկություն,այն է,որ հասարակության զարգացման ընթացքում ի հայտ են գալիս գործունեության նոր ձևեր, հոգևոր կյանքի նոր պայմաններ,որոնք նախադրյալ են հանդիսանում մարդկային նոր ընդունակությունների զարգացման համար:

Տեխնիկայի և մշակույթի զարգացման արդի ժամանակաշրջանում ստեղծվել են մարդու ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման նոր պայմաններ: Հասարակության զարգացման մակարդակը հանգեցրել է նրան,որ մարդու նոր ընդունակությունների զարգացումը գործնականորեն անհրաժեշտ դառնա:

Դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման խնդիրները հետազոտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վերլուծել ստեղծագործական գործընթացի առանձնահատկություններն ընդհանրապես:

Ռուս մանկավարժագետ Պ.Ն. Անդրիանովը իր աշխատություններում առանձնացնում է ստեղծագործության չորս փուլ՝

1. առաջադրանքի էության ըմբռնում և հիմավորում ,
2. մտահաղացման մշակում,
3. մտահաղացման իրականացում գործնական,ինքնուրույն տեխնոլոգիաների պատրաստում,
4. առարկայի աշխատանքի փորձարկում և առաջադրանքի ստեղծագործական լուծման գնահատում:[9]

Այստեղից հետևում է,որ ստեղծագործական մտածողության փուլային համակարգը հատուկ է և՛ տեխնիկական,և՛գեղարվեստական,և՛գրական ստեղծագործության բոլոր ոլորտներին:Ի դեպ, ստեղծագործական մտածողության գործընթացին հատուկ են մի շարք ներքին և արտաքին,սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշներ՝ստեղծագործական

[9] Андрианов П.Н., Развитие технического творчества младших школьников, Москва, 2020, с 21-26.

մտածողությունը,նորարարությունը, և նրա հասարակական նշանակությունը,մտավոր գործունեության որոշակի բնույթը ստեղծագործական մտածողության տարբեր փուլերում,հուզականությունը,ներքին պահանջմունքը՝որպես ստեղծագործական

գործունեության որոշակի ուղղվածության անհրաժեշտություն, կռահելու ունակության հատուկ դերը նստեղծագործական երևակայությունը:

Մտածողությունը հոգեկան գործընթաց է, որի շնորհիվ մարդն արտացոլում է շրջապատող իրականության կարևորագույն երևույթների և իրերի հատկանիշները ու կապերը, հասկանում է շրջապատող աշխարհի զարգացման օրինաչափությունները, կանխատեսում է ապագան, գործում է նպատակադրված և համակարգված:

Ժ. Ս. Գրիգորյանը նշում է. <<Մտածողությունը, պատկերացումները, հասկացությունները, զգացմունքները, կամքի դրսևորումները, հիշողությունները, սպասումները և այլն տիրապետելու մարդու ներքին, ակտիվ ձգտումն է՝ ուղղված իրավիճակին տիրապետելու հրահանգ ստանալուն: Մտածողությունը, որն իր կառուցվածքով կարող է լինել ստեղծագործական, ճանաչողական, գեղարվեստական, էկոլոգիական, հուզական և այլն, կազմված է գիտակցության բովանդակության բոլոր հնարավորությունների մշակման վերախմբավորումից, նրանց՝ մինչև առկա կապերի կազմավորումից կամ քայքայումից:Մտածողության ձևը կախված է նրանից, թե ինչ է իրենից ներկայացնում մարդը՝որպես անհատ, և ինչն է որոշում նրա անհատականությունը >>:[10] Ստեղծագործական մտածողությունը մտածողության այն ձևերից է, որը բնութագրվում է սուբյեկտիվ կամ օբյեկտիվ, նորի ստեղծմամբ կամ մտավոր գործունեության ընթացքում նորագոյացությունների առաջացմամբ:Այդ նորագոյացությունները վերաբերում են այն դրդապատճառներին, նպատակներին, գնահատականներին, իմաստներին: Ստեղծագործական մտածելակերպը տարբերվում է

վերարտադրողական մտածելակերպից,որը ենթադրում է պատրաստի գիտելիքների և կարողությունների օգտագործման գործընթաց :

Ստեղծագործական մտածողության արդյունավետ զարգացման պայմանների բացահայտման ընթացքում հիմնվում ենք արտքին և ներքին գործոնների ազդեցությանմբ անհատական-հոգեբանական զարգացման հայեցակետերի վրա (Ս.Լ.Ռուբինշտեյն, Ա.Ն.Լեոնտև, Կ.Կ.Պլատոնով և այլք): Տվյալ գործընթացի հոգեբանամանկավարժական

[10] Գրիգորյան Ժ.Ս. Սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացումը արտադպրոցական խմբակներում, Երևան, 2016, էջ 80:

հիմքերի ամբողջական վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ այդ պայմանների լիարժեք հաշվառումը և իրականացումը նպաստում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և հոգևոր-ստեղծագործական կայացմանը:

Վ. Ն. Պուշկինը և Ժ.Ադամարը ստեղծագործության երկրորդ փուլը բնութագրում են որպես ծրագրի հասունացում, հասունացման շրջան:[11] Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը դրական ազդեցություն է ունենում նաև կրտսեր դպրոցականների անձնային աճի վրա: Հետազոտողների կարծիքով այս գործընթացի արդյունավետ կազմակերպումը ենթադրում է ոչ միայն ստեղծագործական կարողությունների զարգացում, այլ նաև դառնում է շարժառիթ, կենսափորձ և ի հայտ է բերում մի շարք այլ անձնային որակներ: Ներկայումս ուսուցչի խնդիրն է դառնում ստեղծել պայմաններ երեխայի ներդաշնակ զարգացման, ինչպես նաև ստեղծագործական և մի շարք այլ կարողությունների բացահայտման և զարգացման համար:

Այսպիսով անհրաժեշտ է ուսումնասիրել և կիրառել ժամանակակից պրակտիկայում կիրառվող մեթոդները և տեխնոլոգիաները, որոնք էլ կնպաստեն տարրական դպոցում արդյունավետ ուսման գործընթացի կազմակերպմանը և սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման համար մեր կողմից ընտրվել են ուսցման փոխներգործուն մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք պահանջում էին ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, ոչ ստանդարտ մոտեցում և գիտելիքների ստեղծագործական կիրառում աշակերտների կողմից:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը ուղղված մեթոդները, տեխնոլոգիաները կիրառվել են ուսուցման գործընթացի ժամանակ՝ «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցման ընթացքում:

Օրինակ «Մայրենի» առարկայի ուսուցման ժամանակ բնագրի ընթերցումը կատարվել է հետևյալ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ.

- մինչ բնագրի ընթերցումը «Բազմանիստ» մեթոդի կիրառում,
- դերային խաղի կամ վերջաբանի փոփոխության միջոցով բնագրի ստեղծագործաբար վերարտադրում

[11] Пушкин В.Н. Эвристика- наука о творческом мышлении М.: Политиздат, 2007, с. 201.

- բնագրի շուրջ ստեղծագործական առաջադրանքի (Գրի՛ր քո կյանքի ամենաերջանիկ օրերից մեկի մասին, որը դու անցկացրել ես քո ընտանիքում։) կատարում։

«Բազմանիստ» մեթոդը ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդ է։ Այն խրախուսում է երեխաներին ազատ, անկանշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ։
«Բազմանիստ» մեթոդի հիմանական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է։ «Բազմանիստ» մեթոդը գծագրական դասակարգչի ձև ունի, այն մտածողության ընթացքը դարձնում է ակնառու և պատկերավոր։ Այս մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով կրտսեր դպրոցականի ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև։ Այն ստեղծվում է գծապատկերներով՝ հենվելով երեխաների ակնառու-պատկերավոր մտածողության և երևակայության վրա։ Սրանով իսկ մեթոդի կիրառումը ապահովում է դասի հաջող մեկնարկ։ «Բազմանիստ» կիրառումը շատ ժամանակ չի խլում, անցնում է շատ արագ և աշխույժ՝ ստեղծելով խազային մջավայր, որն էլ իր հերթին նպաստում է սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը [8, էջ 446]։[12]

Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդներից է նաև «Մտագրոհ կամ մտքերի տարափ»-ը։ Այն նպաստում է սովորողների՝ գաղափարների ստեղծման կարողության զարգացմանը և նրանց կողմից առաջադրված գաղափարների քննարկման, վերլուծության իրականացմանը։

«Մայրենի» առարկայի ուսուցման ժամանակ կիրառվող ժամանակակից մեթոդներից են նաև «Կենսագրական բանաստեղծություն»-ը և «Անկյուններ»-ը։

Բնության վրա մարդու ներգործունեության ձևերն ու ծավալներն իրենց որակական և քանակական բնութագրումներով այսօր համամոլորակային նշանակություն են ձեռք բերել։ Այդ առումով անհրաժեշտություն են կրթության նկատմամբ սկզբունքորեն նոր մոտեցումների առաջադրումը և կրթության բովանդակության արդիականցման համատեքստում կարևորվում է բնագիտական հոսքի առարկաների դասավանդման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում։ Լ. Թ. Աատրյանի կարծիքով ակնհայտ է, որ II-IV դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի

բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրության,

[12] Համագործակցային ուսուցում։ Ձեռնարկ / Ա. Հովհաննիսյան և ուրիշներ, Երևան, Անտարես, 2016, էջ 446։

բնագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի,

սոցիոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Տարրական դպրոցում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է ձևավորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք բնության,

մարդկանց, շրջակա միջավայրի նկատմամբ, տարրական գիտելիքներ հաղորդել անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցումը ոչ միայն նպաստում է գիտելիքների ձեռքբերմանը բնագիտական հոսքի առարկաների վերաբերյալ, այլև նպաստում է՝

- սովորողների ինքնաճանաչման, ինքնադրսևորման ու ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանը,
- նպաստում է սովորողների ինքնաճանաչման, ինքնադրսևորման ու ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանը,
- նպաստում է երևույթներին հետևելու, հետևություններ անելու հմտությունների ձևավորմանը,
- ձևավորում է առողջ, անվտանգ ապրելակերպին նպաստող վարքագիծ,
- ձևավորում է շրջապատի, բնության հանդեպ հոգատար վերաբերմունք,
- հետազոտության, փորձի միջոցով իրեն անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը:[13]

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի II-IV դասագրքերում ներառված են մի շարք առաջադրանքներ, խաղ-վարժանքներ, գիտափորձեր, որոնք իրականացվում են «Դիտում», «Զրույց», «Վերլուծություն», «Մանկավարժական գիտափորձ» մեթոդների միջոցով:

Դիտումը մանկավարժական գործընթացի հատուկ ծրագրված համեմատաբար երկարատև, նպատակաուղղված ուսումնասիրումն է: Մինչև դիտման մեթոդի կիրառումը հետազոտողը պլանավորում է, որոշում է նպատակը, խնդիրներն ու առարկան: Դիտման մեթոդի էությունը օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների դիտարկումն է, երբ անհրաժեշտէ դրանց վերաբերյալ ձեռք բերել տեղեկություն: Այս մեթոդի կիրառման արդյունքնում զարգանում է կրտսեր դպրոցականների դիտարկումներ, եզրահանգումներ, վերլուծություններ,համեմատություններ կատարելու կարողությունները:

Զրույց մեթոդի նպատակը լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերումն է: Այս

[13] Ասատրյան Լ.Թ և ուրիշներ, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ. Երևան, 2017, էջ 9:

գործընթացին ևս փորձարկվողը պետք է նախապատրաստվի, նախապես ծանոթանա մասնակից օբյեկտի կամ օբյեկտմների՝ հիմնախնդրի տեսանկյունից կարևոր առանձնահատկություններին, նրանց անձնային որակներին, հետաքրքրություններին,

խառնվածքին և այլն։ Զրույց մեթոդի կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների երևակայության, ստեղծագործական մտածողության, աշխարհընկալման զարգացմանը։

Վերլուծությունը գիտական ճանաչողական մեթոդ է, որի հիմքում հետազոտվող

առարկայի, գործընթացի մտովի կամ իրական մասերի բաժանումն է և ուսումնասիրումը։ Այս գործընթացում տեղի է ունենում ընդհանուրից մասնակիի հետազոտություն, փոխադարձ կապերի բացահայտում։ Այս մեթոդի կիրառման ընթացքում իրականցվում են համեմատություններ, համադրումներ, որոնք էլ նպաստում են կրտսեր

դպրոցականների վերլուծահամադրական կարողության զարգացմանը։[14] «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման գործընթացում նպատակային է պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը։ Այս տեխնոլոգիայի առավելությունը պայմանավորված է կրտսեր դպրոցականների դրդապատճառային, ճանաչողական ոլորտի, տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացմամբ։ Ամերիկացի մանկավարժ Ջոն Դյուին արտերկրի մանկավարժության մեջ պրոբլեմային ուսուցման հայեցակարգի զարգացման գործում իր ուրույն ներդրումն ունի ։ Ուսումնական խնդիրների, իրավիճակների լուծման գործում նա մերժում էր ավանդական քարացած ուսուցումը՝ նախապատվությունը տալով սովորողների ակտիվ, ինքնուրույն գործունեությանը։ Ջոն Դյուին առաջարկում էր ուսուցման բոլոր տեսակները և ձևերը փոխարինել սովորողների ինքնուրույն աշխատանքով։[15] Ամերիկացի հոգեբան Ջ.Բրունները, զարգացնելով պրոբլեմային ուսուցման տեսության գաղափարները, առաջարկում է ուշադրություն դարձնել մի շարք հարցերի, գիտելիքների կառուցվածքին, սովորողի պատրաստակամությանը, տրամաբանական մտածողությանը, ժամանակակից հասարակության մեջ ուսուցման դրդապատճառայնությանը։ 20-րդ դարի կեսերից սկսած՝ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան քննարկել են Ի. Յ. Լերները, Մ. Ա. Դանիլովը, Վ. Պ. Եսիպովը, Մ. Ի. Մախմուտովը, և այլք։ Դիտարկելով այն փաստը, որ պրոբլեմային ուսուցումը ակտիվացնում է ուսուցման գործընթացը, նրանք առաջադրել են պրոբլեմային

[14] Ասատրյան Լ.Թ և ուրիշներ, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ. Երևան, 2017, էջ 39։
[15] Дьюи Дж. Психология и педагогика мышления. М., 2009, 192, с 140.

ուսուցման կազմակերպման մի քանի դրույթներ, որոնցում կարևորվում են՝

- ինքնուրույն եզրահանգումներ անելը, ոչ թե պատրաստի հասկացությունների, սահմանումների հաղորդումը,
- սովորողների ծանոթացումը գիտության մեթոդական համակարգին,
- ստեղծագործական առաջադրանքների միջոցով ինքնուրույն մտքեր, եզրահանգումներ արտահայտելու կարողության ձևավորումը:[16]

Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում ուսուցման արդյունավետ կազմակերպման համար կարևոր է նախագծային տեխնոլոգիայի

կիրառումը, որը հնարավորություն է տալիս բացահայտել սովորողների հետաքրքրությունները, կազմակերպական կարողությունների մակարդակը, ինքնարտահայտման պայմաններ՝ կարևորելով ուսումնական նախագծերի հաջորդական կատարումը: «Նախագիծ» հասկացությունը ընկալվում է որպես ինչ-որ մտահաղացում, պլանավորում: Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի նպատակը տարաբնույթ խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորումն է, սովորողների ինքնազարգացման ապահովումը: Ժամանակակից ընկալմամբ՝ նախագծային ուսուցման տեխնոլոգիայի առանցքային գաղափարն է. «Ինչ սովորում եմ գիտեմ ինչ համար է ինձ

պետք, որտեղ և ինչպես»: Տարրական դպրոցում այս տեխնոլոգիայի կիրառման հիմքում ճանաչողությունն է, որը նպաստում է տարբեր իրավիճակներում սովորողների հարմարմանը, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը, գործնականում կիրառմանը:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում ընդգրկվելով ուսումնական նախագծերում՝ կրտսեր դպրոցականները սովորում են կատարել հետազոտություններ, հավաքել և վերլուծել տարաբնույթ տեղեկություններ, կողմնորոշվել տեղեկատվության մեջ, ընտրել անհրաժեշտ նյութը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, հստակ ձևակերպել մտքերը, առաջադրել նոր մտքեր:

Տարրական դպրոցում ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում է նաև «Մաթեմատիկա» առարկայի դասավանդումը: Մաթեմատիկական կրթությունը մեծ դեր ունի մարդու հոգևոր ոլորտի, բարոյական ու մտավոր արժեքների ձևավորման գործում: Այն սովորողների կողմից մաթեմատիկական գիտելիքների համակարգի յուրացման, ճանաչողական հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացն ու արդյունքն է, որի հիման վրա տեղի է ունենում անձի

[16] Лернер И.Я., Скаткин М.Н. О методах обучения // Сов.педагогика. - 2005.- №3, с 22.

աշխարհայացքի, ստեղծագործական ուժերի և ունակությունների զարգացում: Մաթեմատիկական կրթության հիմնական նպատակը սովորողների մոտ իրական աշխարհի երևույթները մաթեմատիկական տեսանկյունից դիտարկելու և մաթեմատիկայի կիրառական, գործնական ուղղվածությունը տեսնելու կարողության դաստիարակելն է: Մաթեմատիկայի ուսուցումը աշակերտների մոտ զարգացնում է մաթեմատիկական ունակություններ, ձևավորում մաթեմատիկական պնդումների գեղեցկությունը հասկանալու ճաշակ, դաստիարակում նպատակասլացություն, կարգապահություն, հաստատակամություն, քննադատական մտածողություն և այլն: Մաթեմատիկական կրթությունը և մաթեմատիկական մտածելակերպն անհրաժեշտ են ոչ միայն նրանց, ովքեր հետագայում կզբաղվեն մաթեմատիկայով կամ գիտական որևէ հետազոտությամբ, այլ

նաևբոլոր նրանց, ովքեր կաշխատեն երկրի տնտեսության տարբեր բնագավառներում:

Կրթության գործընթացում մաթեմատիկական խնդիրներն ունեն ուսուցողական, գործնական և դաստիարակչական նշանակություն: Նրանք զարգացնում են սովորողների ալգորիթմական, տրամաբանական մտածողությունը, մշակում մաթեմատիկան կիրառելու գործնական հմտություններ, ձևավորում աշխարհայացք: Խնդիրների լուծումը նրանց մղում է ստեղծագործական աշխատանքի: «Մաթեմատիկա» առարկայի դասագրքերում ներառված են խնդիրներ, առաջադրանքներ, լաբիրինթներ, գլուխկոտրուկներ, որոնց նպատակը վերոհիշյալ կարողությունների զարգացումն է:

ՄԱՍ 2.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայիս պետական կրթական չափորոշիչները սահմանում են մի շարք պահանջներ, ինչպես անհատական, այնպես էլ առարկայական հիմնահարցերի արդյունքների վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում փորձել ենք պարզել՝ ինչ դեր ունեն այս սահմանումները և չափորոշիչները կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հարցում: Այս ամենից պարզ է դառնում, որ դրանք միտված են պատրաստել երեխաներին ժամանակակից աշխարհում մշտապես տեղի ունեցող փոփոխություններին, առողջ և անվտանգ կենսակերպի ձևավորմանը և դրա անհրաժեշտության ընդգծմանը, ստեղծագործական կարողությունների դրսևորմանն ու զարգացմանը:

Կրտսեր դպրոցականների համար նախատեսված առարկայական փաթեթը միտված է ձևավորել սեր ստեղծագործական գործունեության, արվեստի նկատմամբ և ցույց տալ դրա անհրաժեշտությունը, ինչպես նաև օգտագործել ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները նախագծային, տեխնոլոգիական և կազմակերպչական մի շարք առաջադրանքների բախվելիս:

Նմանօրինակ մոտեցումը կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում է նրանց՝ կյանքի և ուսումնական գործընթացի ժամանակ հանդիպող բարդ առաջադրանքների և խնդիրների լուծմանը:Այս կարողությունների ճշգրիտ կիառումը կրտսեր դպրոցականի կողմից, հնարավորություն կտա զգալ իրեն ավելի վստահ շրջապատող աշխարհի հետ կապի հաստատման, անձնային որակների սահմանաման և գնահատման, կոնֆլիկտային և բարդ իրավիճակներից ելք գտնելու ընթացքում: Այսէ պատճառը, որ հստակորեն անհրաժեշտ է որոշել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների համար կիրառվող տեխնոլոգիաները և մեթոդները:

ՈՒսումնասիրելով մի շարք մանկավարժների և հոգեբանների մոտեցումները կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ

կարող ենք առանձնացնել հետևյալ անհրաժեշտ պայմանները.

- Ուսուցչի անհատական մոտեցում (Ն. Բ. Վիշնյակովա, Լ. Մ. Միտինա, Վ. Է. Չուդնովսկի, Ե. Լ. Յկաովլևա):
- Մտածողության զարգացում (Վ. Ա. Արտեմեվա, Ն. Ս. Լեյտես,Ա. Մ. Մոլյակո, Ս. Մ. Չուրբանովա):
- Արվեստի և ստեղծագործական գործունեության կապի ստեղծում (Ա. Ա. Մելիք-Փաշաև, Զ. Ն. Նովլյանսկայա, Ն. Վ. Սմետանինա):
- Ուսումնական գործընթացում խաղային գործունեության ապահովում(Ս. Լ. Նովոսելովա, Վ. Ա. Պետրովսկի, Տ. Վ. Շումունովա):[17]

Ըստ գիտնականների կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման համար իր ուրույն նշանակությունը ունի երեխայի երևակայությունը: Լ. Ս. Վիգոտսկին նշում է. «Երևակայությունը՝ որպես յուրաքանչյուր ստեղծագործական գործունեության հիմք, հավասարապես դրսևորվում է մշակութային կյանքի բոլոր ոլորտներում»:[18]

Ստեղծագործական երևակայությունը նոր օբյեկտի ինքնուրույն ստեղծումն է, որը չի ենթադրում ձևաչափ կամ արտապատկերում: Սա է պատճառը, որ հարակավոր է մեծ ուշադրություն դարձնել ստեղծագործական երևակայության զարգացմանը՝ կիրառելով այն ակտիվացնող բազմաբովանդակմեթոդներ: Ուսումնասիրելով կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները հատկանշական են Ա. Ն. Լուկի առաջադրած դրույթները իր «Մտածողություն և ստեղծագործականություն» գրքում: Այնտեղ նա ընդգծում է Ա. Օսբորնի 30-ական թվականների վերջերին առաջարկած «ՈՒղեղային փոթորիկ» մեթոդի կարևորությունը, որը խնդիրների լուծման խմբային մեթոդ է և ակտիվացնում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական միտքը: Ա. Օսբորնի կարծիքով ստեղծագործական գործունեության խթանումը իրականացվում է չորս կանոնների պահապանմամբ.

1) Քննադատության բացառում - մարդը առանց վախի կարող է ասել իր մտքում և հոգում եղածը:

[17] Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. Пособие для студ. пед. вузов и системы повыш. квалиф. пед. кадров, Е.С. Полат и др., М.: изд. центр “ Академия”, 2015, с. 40.
[18] Выготский, Л.С. Воображение и творчество в детском возрасте, 2007, с 96.

2) Առաջընթացի ապահովում – որքան անհեթեթ է գաղափարը, այնքան ավելի մեծ ընդունելության պետք է արժանանա:

3) Որքան շատ առաջարկված գաղափարներ, այնքան լավ:

4) Գաղափարների համադրում – առաջարկված գաղափարները կարող են ենթարկվել փոփոխման և համադրվել միմյանց հետ[:[19]

Գիտնականները(Ն. Բ. Վիշնյակովա, Լ. Մ. Միտինա, Վ. Է. Չուդնովսկի,Ն. Ս. Լեյտես) առաջարկելով մեթոդներ և տեխնոլոգիաներ կրտսեր դպրոցականների անհատական և ստեղծագործական կարողությունների զարգացման համար՝ դրանք համարում են երևակայության, ռեֆլեքսների, ինքնուրույն աշխատանքի արդյունավետ մշակված համակարգ, ինչպես նաև պատրաստ լինել ռիսկային գործունեության առանց հնարավոր սխալի մասին մտածելու:

Ստորև ներկայացված են գիտնականների առաջարկած մեթոդները, որոնք ունեցել են մեծ արդյունավետություն կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացում:

- Ստեղծագործական առաջադրանքի ստեղծում և առաջադրում
- Խնդրային իրավիճակի առաջադրում
- Քննարկում որևէ իրավիճակի կամ երևույթի վերաբերյալ
- Ստեղծագործական գործեության դաշտի ստեղծում
- Խաղային գործունեության բարդ մակարդակի առաջադրում:

Ուսումնասիրենք վերը նշված մեթոդները ավելի մանրամասն:

Ստեղծագործական առաջադրանքը ուսուցողական առաջադրանք է, որը պարունակում է ստեղծագործական բաղադրիչ և որի լուծման համար աշակերտից պահանջվում են գիտելիքների, հմտությունների, կարողությունների ամբողջական համակարգ, որոնք նախկինում չեն օգտագործվել նրա կողմից: Կարող են ասել, որ յուրաքանչյուր ուսումնական առաջադրանք պահանջում է որոշակի ստեղծագործականություն աշակերտների կողմից, այդպիսի առաջադրանքներ կարող ենք համարել գլուխկոտրուկները, շարադրությունները, նկարները, հորինված վարժությունները, հանելուկները և այլն: Ստեղծագործական առաջադրանքները ունեն կարևոր առանձնահատկություն՝ մոտիվացնում են աշակերտներին,

[19] Лук А.Н. 'Мышление и творчество' - Москва: Издательство политической литературы, 1976, с. 63.

քանի որ կրտսեր դպրոցական տարիքում մեծ է հետաքրքրությունը չբացահայտված, առեղծվածային երևույթները բացահայ.տել: Նրանք պատրաստ են հաղթահարել յուրաքանչյուր խոչընդոտ և բացահայտելու այն:

Քննարկում մեթոդի նպատակն է կազմակերպել մտքերի փոխանակում, տպավորությունների կիսում որևէ երևույթի կամ օբյեկտի վերաբերյալ: Ճիշտ կազմակերպված քննարկումը ունի ուսուցողական դաստիարակչական մեշ նշանակություն, քանի որ սովորեցնում է լսել և հարգել շրջապատողների կարծիքը, ավելի խորը ընկալել խնդրի էությունը: Նպատակային քննարկումը կիրառվում է այն դեպուքում, երբ կրտսեր դպրոցականները ունեն արդեն բանավիճելու կարողություն, անկախ մտածողության բարձր մակարդակ, իրենց տեսակետը արդարացնելու և ապացուցելու կարողություն: Մի շարք մասնագետներ կարծում են, որ առողջ քննարկում կազմակերպել պետք է սկսել դեռևս կրտսեր դպրոցական տարիքից պահպանելով դրական միջավայրի և հարաբերությունների պահպանումը աշակերտների շրջանում, ինչպես նաև առանց միջանձնային վեճերի սեփական կարծիքի ապացուցումը:[20] «Գյուտարար» թեստային խաղը (ըստ Լ. Յու. Սուբբոտինայի) երևակայության հետ միասին ակտիվացնում է մտածողությունը:Կրտսեր դպրոցականին առաջարկվում է 3 ստեղծագործական առաջադրանք, որոնց արդյունքը պետք է լինի ստեղծագործական աշխատանք: Աշխատանքի համար աշակերտներին տրվում է 15 րոպե ժամանակ: Այս ընթացքում աշակերտները յուրաքանչյուր առաջադրանքի վերաբերյալ պետք է նկարեն իրենց պատկերացրածը: Ստորև ներկայացված են երեք առաջադրանքները, ինչպես նաև միավորային չափման սանդղակը ՝ ըստ կատարած ստեղծագորական աշխատանքի հնարամտության:

1. Նկարի՛ր գոյություն չունեցող, բայց տնային պայմաններում անհրաժեշտ սարք:
2. Նկարի՛ր գոյություն չունեցող կենդանի և անվանի՛ր նրան:
3. Ի՞նչ կառաջարկես անել, որպեսզի բոլոր մարդիկ լինեն երջանիկ:

[20] Новые педагогические и информационные технологии в системе образования: Учеб. Пособие для студ. пед. вузов и системы повыш. квалиф. пед. кадров, Е.С. Полат и др., М.: изд. центр “ Академия”, 2015, с. 40.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական դպրոցը այն հիմնական օղակն է, որտեղ պետք է առաջնահերթություն համարվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը ուսուցման փոխներգործուն մեթոդների, ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների կիրառմամբ: Դասագործընթացում փոխներգործուն մեթոդներին տեխնոլոգիաների կիրառման էությունը այն է,

- որպեսզի արդյունավետորեն կազմակերպվի սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը,
- ապահովվի նրանց կողմից ուսումնական առաջադրանքների ակտիվ կատարումը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերումը և դրա գործնականում կիրառումը:
- ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների հիմքում ընկած է փոխգործակցությունն՝ինչպես ուսուցչի և աշակերտի, այնպես էլ աշակերտների միջև:

Այսպիսով, ելնելով հետազոտության ընթացքում մեր ձեռք բերած արդյունքներից՝ կարելի է անել այն հետևությունը, որ կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետությունն ապահովում են փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները՝ ուսուցման ժամանակակից միջոցների և ձևերի կիրառման համատեքստում:

Ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Յուրաքանչյուր դարաշրջան իր պահանջներն է թելադրում հասարակությանը, իսկ կրթությունը հասարակություն զարգացման կարևոր գործոն է: Ուսումնադաստիարակչական գործընթացի և կրթության որակի բարձրացման, սովորողներիստեղծագործական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը ուսուցչից պահանջում է դասագործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար կիրառել ուսուցման գործընթացն ակտիվացնող նոր մեթոդներ, միջոցներ ու տեխնոլոգիաներ, որոնց շարքում իրենց ուրույն տեղն ունեն ժամանակակից տեխնոլոգիաներն ու փոխներգործուն մեթոդները:

2. Այս տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման ընթացքում սովորողները ներգրավված են
3. լինում ուսուցման գործընթացում և կարողանում են յուրացրած գիտելիքները կիրառել գործնականում, ազատ ստեղծագործել, նախագծել, իրենց դիրքորոշումն անկաշկանդ արտահայտել: Ժամանակակից կրթության ռազմավարությունը պահանջում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացվածության բարձր մակարդակ, որոնք կրտսեր դրպոցականին հնարավություն կտան արագ և արդյունավետ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում, վերլուծել, համեմատել, համադրել և այլընտրանքային լուծում գտնել:
4. Ուսուցման գործընթացում անձի ստեղծագործական կարողությունների զարգացմանհիմնախնդիրը նոր չէ: Այն անտիկ շրջանի փիլիսոփաներին , Մեծ մտածողներին, մանկավարժներին հետաքրքրել է դեռևս վաղ ժամանակներից սկսած:
5. Ժամանակակից տեխնոլոգիաներն ու փոխներգործուն մեթոդները հնարավորություն են տալիս աշակերտներին դառնալ դասի ակտիվ մասնակիցը, աշակերտները սովորում են ինքնուրույն որոնել, գտնել, ստեղծագործել, յուրացնել նոր գիտելիքներ և կարողություններ:
6. Փոխներգործուն մեթոդներ, ժամանակակից տեխնոլոգիաների, տեղեկատվական և դիդակտիկ մրջոցների կիրառումը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում առավել արդյունավետ է դարձնում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացը ։
7. Այս նպատակի արդյունավետ իրականացման նախապայմաններից մեկնուսուցչի կողմից ուսուցման փոխներգործուն մեթոդներին,բազմազան տեխնոլոգիաներին ու միջոցներին տիրապետելն է:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ., Հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատ. , Երևան, 1996:
2. Ասատրյան Լ.Թ. , Կարապետյան Ն.Զ.«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Երևան, 2016, 224էջ:
3. Ասատրյան Լ. Թ և ուրիշներ, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ. Երևան, 2017:
4. զարգացումը արտադպրոցական խմբակներում, Երևան, 2016, 100էջ:
5. Թորոսյան Կ. ,Չիբուխչյան Կ. ,Բալայան Ա. Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3, Երևան, 2018, 512 էջ:
6. Թորոսյան Կ. , Չիբուխչյան Կ. , Բալայան Ա. , Ինչպես պլանավորել մայրենիի դասը 4, Երևան, 2018, 494 էջ:
7. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ / Ա. Հովհաննիսյան և ուրիշներ, Երևան, Անտարես, 2016, 123 էջ:
8. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Ե., 1986, 288 էջ:
9. Մանկավարժություն 1-2., ուսումնական ձեռնարկ, Երևան,2009թ. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mankavarjutyun/2008%281-2%29.pdf
10. Ռոդարի Ջ. Ստեղծագործականության երևակայության քերականություն, Երևան, 2005:
11. ՈՒշինսկի Կ. Դ, Մանկավարժական ընտիր երկեր Հ1,Երևան, 1998, 344 էջ:
12. Ֆարզաղյան Հ. Ռ. ,Սովորողների ստեղծագործական գործունեության կազմակերպումը դպրոցում, Երևան, 2012:
13. Андрианов П.Н., Развитие технического творчества младших школьников, Москва, 2020, 426с.
14. Выготский, Л.С. Воображение и творчество в детском возрасте, 2007, 96 с.
15. Давыдов В.В. Теория развивающего обучения. М., 2006. 544 с.
16. Деннисон П. И. Деннисон Г. Е. Гимнастика мозга. Книга для учителей и родителей, Издательство: Весь, 2020.